ԱՎԱՐՏԵՔ ԱՎԵԼԻ ԶՈՐԵՂ, ՔԱՆ ՍԿՍԵԼ ԵՔ

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ՄԱՏ. 21.28-31

28 *“Բայց դուք ի՞նչ եք կարծում: Մի մարդ երկու որդի ուներ: Նա եկավ և առաջինին ասաց. Որդի՛, այսօր գնա՛, **իմ այգում աշխատի՛ր**: **29** Նա էլ պատասխանեց եւ ասեց. Չեմ կամենում. բայց հետո զղջաց եւ գնաց: **30** Գնաց մյուսի մոտ և նույնն ասաց: Նա էլ պատասխանեց ու ասաց. Կգնա՛մ, տե՛ր, ու չգնաց: **31** Այդ երկուսից ո՞վ հոր կամքը կատարեց: Նրան ասացին՝ առաջինը: Հիսուսը նրանց ասաց. Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ մաքսավորներն ու պոռնիկները ձեզանից առաջ կմտնեն Աստծու արքայություն:*

1. *Մի դատեք նրանց, ովքեր դեռ այգու մեջ չեն: Նրանք կարող են լինել զղջման ճանապարհին:*

2. *Բայց դուք, որ այգու մեջ եք, գործը ավարտին հասցրեք:*

   *Շատ մարդիկ կյանքում և հավատքի ճանապարհին լավ են սկսում: Խոստանում են, ոգևորվում են, որոշումներ են կայացնում: Բայց տարին, ծառայությունը և հավատքը չեն գնահատվում սկիզբով, այլ՝ **ավարտով**:*

Պարզապես այգու մեջ լինելը դեռ չի նշանակում՝ Հոր կամքը կատարել:

Մատթեոս 21-ի այս առակը իր հոգևոր տրամաբանությամբ հիշեցնում է Ղուկաս 15-ի վերադարձող որդու առակը, բայց կարևոր տարբերությամբ:

Ղուկաս 15-ում փոքր որդին տանից դուրս էր և վերադարձավ, իսկ Մատթեոս 21-ում երկու որդիներն էլ այգու մեջ են...

Երկուսն էլ լսեցին հոր ձայնը և երկուսն էլ գիտեին նրա կամքը.

Ղուկաս 15-ում հարցն է.

Ո՞վ կվերադառնա տուն:

Մատթեոս 21-ի հարցն հետևյալն է.

Ո՞վ կաշխատի Իր այգում:

Այգու գործը հեշտ չէ. այն պահանջում է ջանք, աշխատանք և համբերություն:

Աստվածաշնչյան օրինակներ. լավ սկիզբ, բայց վատ ավարտ ունենալու մասին.

1. ***Սամսոն (Դատ. 13–16)***

   Օծված էր դեռ ծնվելուց առաջ՝ Աստծու հատուկ կոչումով (Դատ. 13.5)

   Բայց թույլ տվեց, որ փոքր կոմպրոմիսները դառնան մեծ անկում

   *«Նա չգիտեր, որ **Տերը հեռացել էր** իրենից...»*

2. ***Սավուղ Թագավորը (Ա Թագավորաց 10–15)***

   Սկսեց խոնարհությամբ և Աստծու ընտրությամբ

   Բայց նա սկսեց ավելի շատ վախենալ մարդկանցից, քան լսել Աստծուն

   *«**Հնազանդությունն** ավելի լավ է, քան զոհը»:*

3. ***Սողոմոն Թագավորը (Ա Թագավորաց 3;11)***

   Սկսեց իմաստությամբ և Աստծու ներկայությամբ (Գ Թագ. 3.9–12)

   Կառուցեց տաճարը, գրեց առակներ, ապրեց օրհնության մեջ

   *«Նրա սիրտը **ամբողջապես նվիրված չէր** Տիրոջը»:*

4. ***Դեմաս (Բ Տիմոթեոս 4.10)***

   Սկսեց որպես Պողոսի ծառայակից (Կող. 4.14, Փիլեմոն 1.24)

   Քայլում էր առաքյալի կողքին, մասնակցում ծառայությանը

   *Դեմասը լքեց ինձ՝ այս **աշխարհը սիրելով** (Բ Տիմ.4.10)*

Աստվածաշնչյան օրինակներ. նրանք, ովքեր դժվար սկիզբ և լավ ավարտ ունեցան.

1. ***Հիսուս (Դատավորներ 13–16)***

   Ծնվեց մսուրում, բնակվեց Կափառնիայում,

   ինքն իրեն խոնարհեցրեց ու հնազանդ եղավ մինչև մահ, այն էլ՝ խաչի մահ (Փիլ. 2.8)

   «Կատարված է» (Հով. 19.30):

2. ***Պողոս առաքյալ***

   24 *Հրեաներից հինգ անգամ քառասունից մեկով պակաս հարված եմ ընդունել: **25** Երեք անգամ խարազանվել եմ, մեկ անգամ քարկոծվել, երեք անգամ նավաբեկության ենթարկվել, մի ցերեկ ու գիշեր ծովի անդունդի մեջ եմ մնացել: **26** Բազմաթիվ ճանապարհորդություններ. վտանգներ գետերից, վտանգներ ավազակներից, վտանգներ ազգակիցներից, վտանգներ հեթանոսներից, վտանգներ քաղաքում, վտանգներ անապատում, վտանգներ ծովում, վտանգներ սուտ եղբայրներից: **27** Հոգնություն ու աշխատանք՝ բազմիցս արթուն մնալով, քաղցի ու ծարավի մեջ, բազմիցս ծոմի մեջ, ցրտի ու մերկության մեջ: Մյուս նեղություններից զատ ինձ վրա է կիտվում բոլոր եկեղեցիների ամենօրյա հոգսը (Բ Կոր.11.24-27):*

   Եղբայրնե՛ր, ես ինձ չեմ համարում, որ հասել եմ, բայց մի բան կա. հետևում թողածը մոռանալով՝ դեպի առջևում եղածներն եմ ձգտում: (Փիլի. 3.13)

   եւ համբերութեամբ վազենք մեր առաջին դրած ասպարէզի ընթացքը. (Եբր. 12.1)

   Տերն ասաց. Լա՛վ, բարի ու հավատարի՛մ ծառա... Մատթեոս 25.23

- ***Ինչպե՞ս կարելի է տարին ավարտել ավելի զորեղ, քան այն սկսել ենք***

1. ***Եթե արդեն այգու մեջ ես, գործը կիսատ մի թող:***

Ա Կորնթացիս 15.58 – «Եղե՛ք հաստատուն, անշարժ, միշտ առատ Տիրոջ գործի մեջ»:

2. ***Թույլ մի՛ տուր, որ հոգևոր հոգնածությունը քեզ կանգնեցնի:***

   Գաղատացիս 6.9 – «Չհոգնենք բարիք անելուց, որովհետև ժամանակին կհնձենք»:

3. ***Թող տարվա վերջը լինի զղջման և ուղղման ժամանակ***

   Առաջին որդին զղջաց և գնաց:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: